ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հուլիսի 2024 թվականի N 524-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների, 2005 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 29-րդ և 50-րդ, Եղեգնաձոր համայնքի ավագանու 2024 թվականի հունվարի 26-ի N 02-Ն որոշման 2-րդ հավելվածի 19-րդ կետերի պահանջներով, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 1991 թվականի ապրիլի 9-ի N 4 որոշման քաղվածքը, քաղաքացու դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ճանաչել քաղաքացիներ՝ Ժիրայր Աղվանի Արղումանյանի (ծնված՝ 1952թ.), Արշալույս Աշոտի Արղումանյանի (ծնված՝ 1953թ.), Սիրարփ Ժիրայրի Արղումանյանի (ծնված՝ 1976թ.), Լիանա Ժիրայրի Արղումանյանի (ծնված՝ 1981թ.), Աննա Ժիրայրի Արղումանյանի (ծնված՝ 1982թ.) և Սասուն Ժիրայրի Արղումանյանի (ծնված՝ 1990թ.) համատեղ սեփականության իրավունքը Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի 12-րդ փողոց, 5/1 բնակելի տան և օժանդակ շինությունների նկատմամբ (կադաստրային ծածկագիր՝ 10-032-0024-0005):

2. Բնակելի տունը և օժանդակ շինությունները բավարարում է «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմաններին:

3. Սույն որոշման առաջին կետում նշված բնակելի տանը տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Եղեգնաձոր, Մալիշկա 12-րդ փողոց, 5/1 բնակելի տուն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ